

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

1.1.1. 2000թ. հունվար-սեպտեմբերի ՀՆԱ-ի ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը 2000թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 676303.4 մլն. դրամ և 1999թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նրա աճի տեմպը կազմել է 102.9 տոկոս:


ՀՆԱ-ի աճը հանրապետությունում պայմանավորված է հիմնականում հետևյալ հիմնական ճյուղերի ավելացված արժեքի հավելաճով. արդյունաբերության՝ 3.9%-ով, շինարարության՝ 17.5%-ով, առևտրի և հանրային սննդի՝ 6.9%-ով, տրանսպորտի և կապի՝ 1.4%-ով: Ընդ որում, հարկ է նշել, որ ՀՆԱ-ի աճը որոշ չափով դանդաղել է գյուղատնտեսության ճյուղի ավելացված արժեքի աճի տեմպի նվազման (96.3%) հաշվին, որը պայմանավորված է անբարենպաստ կլիմայական պայմաններով (երաշտով): 1999թ. հունվար-սեպտեմբերին ձևավորված գյուղատնտեսության աճի տեմպի ապահովման պայմաններում (100.8%) ՀՆԱ-ի աճը կկազմեր 104.1 տոկոս:

Համախառն ներքին արդյունքի և համախառն ավելացած արժեքի արտադրությունը տնտեսության առանձին ճյուղերով

	1999 թ. հունվար-սեպտեմբեր		2000 թ. հունվար-սեպտեմբեր	
	մլրդ. դրամ	տոկոսներով ընդհանենի նկատմամբ	մլրդ. դրամ	տոկոսներով ընդհանենի նկատմամբ
Համախառն ներքին արդյունք				
շուկայական գներով	670.8		676.3	
հիմնական գներով	616.7	100.0	623.8	100.0
այդ թվում՝				
ապրանքներ	393.4	63.8	394.6	63.3
դրանցից՝				
արդյունաբերություն	155.8	25.3	166.4	26.6
գյուղատնտեսություն	180.7	29.3	159.0	25.5
ծառայություններ	223.3	36.2	229.2	36.7
դրանցից՝				
տրանսպորտ և կապ	39.5	6.4	40.0	6.4
արևտուր	50.0	8.1	52.8	8.5

ՀՆԱ-ի աճի տեմպի դինամիկան

(տոկոսներով նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ)



Արտադրված ՀՆԱ-ի կառուցվածքը

(ընթացիկ շուկայական գներով)

Սլրդ. դրամ	տոկոսներով ընդամենի նկատմամբ
------------	------------------------------

	I Եռամսյակ	II Եռամսյակ	III Եռամսյակ	9 ամիս	I Եռամսյակ	II Եռամսյակ	III Եռամսյակ	9 ամիս
--	---------------	----------------	-----------------	-----------	---------------	----------------	-----------------	-----------

1999 թ.

Համախառն ներքին արդյունք	130.0	216.2	324.6	670.8	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝								
ապրանքներ	61.5	123.0	208.9	393.4	47.3	56.9	64.4	58.6
ծառայություններ	51.0	70.5	89.9	211.4	39.2	32.6	27.7	31.5
ապրանքների և ներմուծման զուտ հարկեր	17.5	22.7	25.8	66.0	13.5	10.5	7.9	9.9

2000 թ.

Համախառն ներքին արդյունք	130.7	218.4	327.2	676.3	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝								
ապրանքներ	60.5	125.8	208.3	394.6	46.2	57.6	63.7	58.3
ծառայություններ	53.3	71.4	95.2	219.9	40.8	32.7	29.1	32.5
ապրանքների և ներմուծման զուտ հարկեր	16.9	21.2	23.7	61.8	13.0	9.7	7.2	9.2

Եռամսյակից եռամսյակ տնտեսական գործունեության միտումներն արտացոլելու նպատակով բերվում են ՀՆԱ-ի տվյալները՝ բազային տարվա միջին տարեկան գներով: